

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆԻՆ

Հարգելի տիկին նախարար,

Թույլ տվեք Սիրիայի Արաբական հանրապետության Հալեպ քաղաքից Հայաստան տեղափոխված Մարի Փոլադյանի անունից հայտնել իր խորին շնորհակալությունը Ձեր կողմից ցուցաբերած օգնության համար: Ծանր իրավիճակում այդ օգնությունը ապրելու հույս տվեց իրեն և մեծ հավատ ներշնչեց հայրենիքի նկատմամբ:

Միաժամանակ՝ ես՝ Անահիտ Չալկադրյանս, որ լիազորված էի Մարի Փոլադյանի կողմից զբաղվելու օգնություն խնդրելու հարցով, ցանկանում եմ իմ կողմից ևս հայտնել խորին շնորհակալություն և արտահայտել իմ հիացմունքը ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակիցների մասնագիտական բարձր մակարդակի և անսահման մարդկային դրժուրումների համար:

Հատկապես՝ ցանկանում եմ նշել ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Չաքարյանի, մերձավոր և միջին արևելքի հայ համայնքների վարչության պետ Լուսինե Ստեփանյանի և նույն վարչության առաջին կարգի մասնագետ Աստղիկ Ղայթանջյանի անունները:

Հարգելի տիկին նախարար, կրկին անգամ հայտնում եմ մեր խորին շնորհակալությունը և ցանկանում Ձեր ղեկավարած գերատեսչությանը նորանոր հաջողություններ Հայաստանի զարգացմանը նվիրված հայրենանվեր գործում:

Հարգանքով՝

Մարի Փոլադյան և Անահիտ Չալկադրյան

12.12.2012թ.,

